ԺԵ. դարի սկզբին, 1409 թուին, «ի 17 յոբելեանի և ութ թուոց», «ընդ հովանեաւ սուրբ Նշանին Հազարաբիւրք անուանեալ» գրուած է Գիրք Ստորոգութեանց Արիստոտելի(*)։ Փիրղալէմեանը իւր «Նոտարք Հայոց»ի մէջ բերում է մի Պատարագամատոյցի յիշատակարան, գրուած «ի թուականիս մեր Հայոց ՋԺ (= 1461) ի ձոր Շահապունից, ի վանքս Կուգոյ». գրիչն է «Յովսէփ յետին եպիսկոպոս»(**)։

Իբրև գրչութեան գեղեցիկ գործ շատ աւելի կարեւոր է Էջմիածնի մատենադարանի № 1511 (կար. 1462) Յայսմաւուրքը, «ի թվաբերութես. հայոց ի Ջ. Ի.» (= 1471) Մանուէլ գրչի ձեռքով, «ի ձորս Շհապունեաց ի գեւղս, որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ. Հազարաբիւրացս եւ սբ. Կաթուղիկէիցս սբ. Աշծանի եւ սբ. Ստեփանոսի եւ գեղամիջի սբ. Գրիգորիս. եւ սբ. Նշանիս եւ այլ միահամուռ Վարդանանց սբ. նահատակացս» (պատկ. 192, Յաւել. Բ. 54)։ Ձեռագրի սկզբնական մասը գրել է Յակոբ գրիչ մինչև 70բ., և ապա շարունակել է Մանուէլը, որի ծնողներն են Պետրոս քահանայ և Ալամշատ։ Ստացողներն են Յովհաննէս կրօնաւոր կամ ճգնաւոր և Յորդան կամ Յորդանան մաղդասի իւր որդի Մկրտիչ աբեղայի հետ. յիշում է եւ «Գրգրին եւ տր. Խաչատուրին եւ տր. Յոհանին», որոնք հաւանօրէն վանքի միաբաններից են, նաեւ «Խոնդշայ ապաշխարողին, որ ԺԲ. թկյ. աւգնութի. երեսս մեզ» (գրչին)։ Ձեռագիրը բաղկացած է 601 թերթից, 31,8×20,6 սմ. մեծութեամբ, երկսիւն, իւրաքանչիւրը 24½×7,2 սմ.։ Թուղթը ընտիր է, ողորկ, լաւ օսլայած(***)։

Այս Մանուէլ քահանայ գրչի ձեռքով գրուած է և մի Դանձարան Ջ և Իէ (= 1478) թուին, «ի գեւղս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ. Հազարաբիւրացս եւ սուրբ Գրիգորիս եւ սբ. Նշանիս»։ Ստացողն է Ըռուզբէկ, որի մահուանից յետոյ գործը շարունակել են տուել կինը՝ Ասուդան, դուստրը Սուլթան-մելիք և թոռները Ալիբէկ, Ահտիբէկ։ Ըռուզբէկի փեսան և Սուլթան-մելիքի ամուսինն է Հազարբէկ և սրանց որդիքն են Սաթիբէկ, Յակոբ և Ահտիբէկ, որոնք ձեռագիրը ընծայում են Ագուլիսի Միջնթաղի Ս. Սիօն և Ս. Յակոբ եկեղեցիներին։ Մանուէլ գրչի ծնողները Պետրոս քահանայ և Ալամշատ յիշուած են և այստեղ, որով երկու Մանուէլների նոյնութիւնը կասկածից դուրս է մնում(*)։

Նոյն Մանուէլ գրիչը 1493 թուին «ի ձորս Շահապունեաց ի գեւղս Կուքի (s!) կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս եւ սուրբ խաչերոյն եւ Վարդանանց սուրբ նահատակացս» գրել է մի Մաշտոց Վարդան քահանայի համար, «ի ժամկին. որ Ըռաստամ անուն փատշահ կանգնեցաւ եւ գնաց ի վր. Շարվանայ . . .»(**)։ Նոյն յիշատակարանից օգտուել է և Ալիշան, առանց տեղը յիշելու, որից իմանում ենք, թէ Վարդան քահանայի ծնողներն են Մուրատ և Խոնթխաթուն և մօրքուրն Թագամելիք և թէ Մաշտոցը գրել է տուել «ի վայելումն որդոյ իւրոյ Վանական քահանային և Անտոնին»(***)։

Վերջապէս նոյն Մանուէլ գրիչն ունի և մի աւետարան գրած «թուականիս Հայոց Ջ և ԽԴ (= 1495) ընդ հովանեաւ սուրբ Հազարաբիւրացս եւ սուրբ Նշանացս եւ սուրբ եկեղեցեացս ի գիւղս Կուքի կոչեցեալ»։ Ստացողներն են Ջան ղուրբան և Ջաւահիր ամուսինները, ի վայելումն իրենց Գալուստ քահանայ որդուն։ Յիշատակարանի վերջում գրիչը ներողութիւն է խնդրում սխալների և խոշորութեան համար, «զի կար մեր այս էր, զի լոյս աչիս պակասեալ էր եւ հոգս եւ պատրանք աշխարհիս զմեզ ընկղմեալ էր ի դառն եւ դժուար ժամանակի, որ յոյժ վշտացեալ եմք ի յայ(լ)ազգեաց . . .»(****)։

Մի տարի յետոյ «ի թվ. Հայոց ՋԽԵ (= 1496), ի դառն եւ դժար ժամանակի յոյժ տառապեալ եմք», «ի խնդրոյ բարեպաշտ եւ երկիւղած քրիստոնէից Գուզալին եւ ամուսնոյն իւր Խոնձին» գրուած է մի աւետարան, որի գրչի մասին Սրուանձտեանցը տեղեկութիւն չէ տալիս, բայց, հաւանօրէն, նոյն Մանուէլն է(*****)։

Գեղամիջի Ս. Գրիգորը, յիշուած տեսանք նախընթաց յիշատակարանների մէջ, կիսականգուն վիճակի մէջ է այժմ. բայց այդ չէնքն էլ հինը չէ, այլ 1669 թուին շինուած հնի տեղում Յակոբ կաթուղիկոսի ժամանակ. «Մեք Կուգվայ ժողով/ուրդս շնորհօքն Քս.ի / շինեցաք սբ. Գրիգոր եկեղ. հայրապետութի.։ / տն. Յակոբայ. թվ. ՌՃԺԸ»։

Նահապետ կաթուղիկոսի ժամանակ վանքի առաջնորդը մինչև իսկ եպիսկոպոս էր և հաւանօրէն նաև շրջանի առաջնորդը, որ տարբեր տեղում գրուած մի աւետարան թուագրուել կարող է նորա անունով «ի հայրապետութեան տեառն Նահապետ կաթուղիկոսի ի առաջնորդ (s!) Մարտիրոս պարոն տէր Հազարաբերկչին. արդ նորոգեցաւ յիշատակարան սուրբ աւետա-

(*) Սմբատեան, Երնջակ, եր. 125, արտագրել է Դանձասարի 1868 թ. ցուցակից։

(**) Փիրղալէմեան, Նոտարք, եր. 205, Համեմատել Ալիշան, Սիսական, եր. 487 և Սմբատեան, Երնջակ, եր. 130։

(***) Յայսմաւուրքի յիշատակարանի սկզբում 601բ. կայ մատենագրական տեղեկութիւն Տէր Իսրայէլ Խաչենեցու խմբագրութեան մասին։ Մի ուրիշ յիշատակարանից 602բ. երևում է, որ յետին ստացող Գրիգոր ոմն տալիս է «Վախմ Կալասեռու սբ. Գրիգորի եկեղեցւոյն, որ է յերկիրն Վայոց ձորոյ, ի նահանգին որ ասի Աշոտի ձոր», իսկ այդ գիւղի անցման դէպքում «տանեն Հերմոնի վանքն և սբ. յանապատն Շատիկու ամանաթ պահեն»։

(*) Սմբատեան, Երնջակ, եր. 194, 141։

(**) Քարամեան, Ցուցակ, եր. 47, եւ Սմբատեան, Երնջակ, եր. 126։

(***) Սիսական, եր. 487։

(****) Սմբատեան, Երնջակ, եր. 134-5։

(*****) Թորոս Աղբար, 423։ Ալիշան, Սիսական, 487։